



ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Ծր. 4 Յուն.— Ս. Բարսի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուոին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

* Կիր. 5 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան: Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ:

— Կէսօրէ ետք սկսան Ս. Ծնունդը կանխող աւագ տօները, որոնցմէ առաջինին՝ Դարթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբոր հանդիսատր անխաւտօնակը պաշտուեցաւ շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ, անխաւագհոռեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռի շարականը երգելով թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

* Բշ. 6 Յուն.— Ս. Դարթի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ըզզեստատրուած բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին, ուր մնաց մինչև ժամերգութեան աւարտը և ընդունեց Միաբանութեան շնորհատրութիւնները՝ Առաքելական Ս. Աթոռոյ տօնին առթիւ: Հանդիսատր սուրբ պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճմեան և բարոզեց օրուան տօնելի սուրբերուն մասին՝ զանոնք աներկայացնելով իրրև անձնագոհութեան սքանչելի տիպարներ: Ապա, Լուսա-

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

րարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի անխաւագհոռեամբ կատարուեցաւ, ընկալեալ սովորութեան համաձայն, հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքներու հոգիներուն համար:

— Ս. Ստեփանոսի հանդիսատր անխաւտօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, զըլխատրութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Տօնին բուրվառակիր վարդապետներն էին Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան և Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան:

* Գշ. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի Նախավրկային: Ս. Աթոռոյս երկու սարկաւագներն ու չորս ուրարակիրները, զանձատան թանկագին շապիկներով և սաղաւարտներով զգեստատրուած, պանծացուցին յիշատակը իրենց մտատիպարին, կատարելով ժամերգութեան վերջին բաժինը: Արարողութեան կը անխաւագհէր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ապա մատուցուեցաւ սուրբ պատարագ՝ Մայր Տաճարի աւանդատան Ս. Ստեփանոս մատուոին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Դշ. 8 Յուն.— Գլխատր առաքելներու՝ Պետրոսի և Պօղոսի անխաւտօնակը հանդիսատրապէս պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, անխաւագհոռեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ասլանեանի:

* Եշ. 9 Յուն.— Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատուոին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան:

* Որ. 10 Յուն.— Կէսօրէ ետք ժամը 2.30-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճար, ուր նախագահեց Որդոց Որոտման տօնի մեծահանդէս նախատօնակին: Արարողութեանց աւարտին, Ս. Աթոռի շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը Պատրիարքարան բարձրացաւ:

* Ծր. 11 Յուն.— Տօն Ս. Որդոցն Որոտման, Յակոբայ առաքելոյն և Յովհաննոս Աւետարանչիին: Բարեկենդան Ս. Ծննդեան պահոց: Օրոտան հանդիսատիս սուրբ պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուռին մէջ մատուցեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և ապա, ամպհովանիի ներքև և Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց երադարձ մեծահանդէս թափօրին: Արարողութիւններու աւարտին, Միաբանութիւն և ժողովուրդ Ս. Աթոռի շարականին երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը նշխարներ բաժնեց թոյրին, փակելով շարքը աագ տօներուն:

* Կիր. 12 Յուն.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն որ Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Գշ. 14 Յուն.— Նոր Տարի - 1975 - ըստ Հին Տոմարի: Կէս գիշերին՝ Մայրաքաղաքի մեծ զանգը ուրախ զանգիւններով կ'աւետէր Նոր Տարին: Առտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աագ Սեղանին վրայ մատուցուցաւ սուրբ պատարագ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառնալարեան: Ապա, Ս. Աթոռի շարականին երգեցողութեամբ, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. ի դիմաց Միաբանութեան և ժողովուրդին՝ Ամանորի իր շնորհատրութիւնները ներկայացուց Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր, ընելով հանդերձ բարեմադրութիւններ անոր արեւշատութեան համար: Ս. Թարգմանչաց Վարժարանէն փոքրիկ մը խնամուած ուղերձով իր և իր ընկերներուն երախտագիտական զգացումները ներկայացուց Պատրիարք Ս. Հօր, նուիրելով լետոյ ծաղկեփունջ մը: Ամենէն ետքը խօսք առաւ Ն. Ամենապատուութիւնը, որ աւուր պատշանի խօսքերէ և պահէն թելադրուած մտածումներու արտայայտութեանէն

ետք շնորհատրեց թոյրը և մէկական նարինջ բաժնեց:

* Բշ. 20 Յուն.— Յիշատակ մենելոց: Հստ սովորութեան, Մայր Տաճարի Աագ Սեղանին վրայ պատարագեց Աագ Թարգման Հոգ. Տ. Գեղարդ Վրդ. Նագարեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Հոգ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէանի:

* Ծր. 25 Յուն.— Է. օր Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աագ Սեղանին ձախակողմը գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

— Անուանակոչութեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծափէ Արք.:

* Կիր. 26 Յուն.— Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտուն, Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեանի գլխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Արքագանը մատուց օրոտան հանդիսատիս սուրբ պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որը ձայնաւիտուցաւ խորալէլեան ռատիկայանէն: Վանք վերադարձին, Հայոց Թաղի մուտքին, «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը լառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տճօրհնէք»ի արարողութիւն և օրհնուեցան Ս. Աթոռիս բարիքները: Ապա, փոքր թափօր մը, Հոգ. Տ. Գեղարդ Արքեպս. ի գլխատրութեամբ, նոյն արարողութիւնը կատարեց, թափօրական գնացքով, վանքի սեղանատան, խոհանոցին, մառանին և փոռին մէջ:

— Յովհ. Կարապետի ծննդեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Բշ. 27 Յուն.— Տօն Ծննդեան Ս. Յովհաննոս Կարապետին: Ս. պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աագ Սեղանին աջակողմը գտնուող Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պալիօզեան:

* Ծր. 1 Փետր.— Ս. Թէոդոսի թագ. և 7 մանկանցն Եփեսոսի: Ս. պատարագը մա-

տնուցնեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 2 Փետր.— Ս. Պատարագը մատուցնեցաւ Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Աղան Վրդ. Պալիօգեան:

* Շբ. 8 Փետր.— Ս. Հայրապետացն՝ Աթանասի և Կիրղի: Ս. պատարագը մատուցնեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 9 Փետր.— Ս. պատարագը մատուցնեցաւ Ս. Յարութին, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գեղարդ Արդ. Տաւադարեան:

* Շբ. 15 Փետր.— Ս. Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցնեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Կիր. 16 Փետր.— Ս. պատարագը մատուցնեցաւ Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Աղան Վրդ. Պալիօգեան:

* Շբ. 22 Փետր.— Ս. Որդոց և Թոռանց Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցնեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 23 Փետր.— Բարեկենդան Առաջատրի պահոց: Ս. պատարագը մատուցնեցաւ Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Աղան Վրդ. Պալիօգեան:

* Դ2. 26 Փետր.— Տեառնընդառաջի հանդիսատր նախատօնակին և անոր յաջորդող «Անդատան»ին նախագահեց Հոգ2. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

— Գիշերակիգրին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»ի և Հսկման արարողութիւններուն նախագահեց Հոգ2. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Ե2. 27 Փետր.— Տեառնընդառաջ: Մայր Տաճարի Առաջ Սեղանին վրայ սուրբ պատարագ մատուց Հոգ2. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Որ. 28 Փետր.— Յիշատակ Յովնանու մարգարէին: Առաւօտեան ծամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ ընթերցումը Յովնանու մարգարէութեան գրքին:

— Ս. Սարգիսի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգ2. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Ե2. 26 Դեկտ.— Երոպական Ս. Ծնունդի տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներուն, շնորհատրական այցելութեան գնաց Ֆրանչիսկեան Գերշ. Կիւթոտին և Լատիններու Ամեն. Պատրիարքին: Ապա, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի, այցելեց Անկիթան Արքեպիսկոպոսին և Արաք Անկիթան Եպիսկոպոսին: Իսկ Հոգ2. Տ. Հայկասէր Վարդապետ, ընկերակցութեամբ Հոգ2. Հայրերու այցելեց Հայ Կաթոլիկ և Մարոնիք համայնքներու մեծաւորներուն, ինչպէս նաև Լուտերականներու և Արաք Լուտերականներու Երէցներուն:

* Դ2. 8 Յուն.— Օրթոտոքս Եկեղեցիի Ս. Ծնունդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներուն, շնորհատրական այցելութեան գնաց Յունաց Ամեն. Պատրիարքին: Իսկ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս, Հոգ2. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Ասորիներու և Հապէշներու Եպիսկոպոսներուն:

* Ե2. 16 Յուն.— Քրիստոնէայ Համայնքներու Գործերու նոր տնօրէն Տիար Բէռլլէն Քական, ընկերակցութեամբ իր օգնական Տօթթ. Միխայիլ Քլալնի, այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բ2. 20 Յուն.— Մեր Ս. Ծնունդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, յաջորդաբար Պատրիարքարան այցելութեան եկան՝ Լատինաց Ամեն. Պատրիարքը, Յոյներու Պատր. Փոխանորդը, Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիւթոտը և Հապէշներու Եպիսկոպոսը, իրենց Միաբանութեան անդամներով, Անկիթան Արքեպիսկոպոսի Տեղակալն ու Արաք Անկիթան Եկեղեցիի պետը, Հայ Կաթոլիկ և Մարոնիք համայնքի մեծաւորները, Լուտերականներու և Արաք Լուտերականներու Երէցները, ինչպէս նաև քաղաքի հիւպատոսական կազմը, Քաղաքապետը, Նահանգային Կառավարիչը և Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչը:

* Շբ. 25 Յուն.— Պապական Գերշ. Նոյիսկը և Յունական ընդհ. հիւպատոսը նոյն առթիւ շնորհատրութեան եկան Պատրիարքարան: